


ԻՊԱՍ զեկույց . Պաշտպանության
Նախարարության դեմ դատական
գործերի ուսումնասիրություն



Երևան, 2021թ.



Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական բարեփոխումների խթանում. հանրային կառավարման որակի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ին ու զեկույցի հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի տեսակետների հետ:

*Սույն զեկույցի հեղինակներն են՝ Լուիզա Հովհաննիսյանը, Նինա Հակոբյանը:
Դատական ակտերի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրմանը աջակցել է
Լուիզա Հովհաննիսյանը:*

Բովանդակություն

Ամփոփագիր	4
Դիտարկված գործերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ.....	7
Վարչարարության իրականացման հետ կապված խնդիրներ.....	13
Կարճման որոշումներ.....	19
Եզրակացություն և առաջարկություններ.....	22

Ամփոփագիր

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը 2020թ. մարտի 1-ից 2021թ. մարտի 31-ը ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Հանրային կառավարման համակարգի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ պաշտպանության նախարարության դեմ բերված հայցերով 2019թ. և 2020թ. ՀՀ վարչական դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 10 վճիռները և 47 վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներից 40-ը:

Դիտարկված գործերից 4-ով հայցերն ամբողջությամբ բավարարվել են (40%), 1-ով՝ բավարարվել է մասնակի (10%), իսկ 5-ով՝ մերժվել (50%):

ՀՀ պաշտպանության նախարարության դեմ ներկայացված հայցադիմումներով բավարարված գործերը վերաբերել են հետևյալ խնդիրներին.

- ծառայողների աշխատանքային-ծառայողական իրավահարաբերություններին վերաբերող հարցեր, օրինակ՝ վերագրվող կարգապահական խախտումների հետ կապված խնդիրներ: Դատարանն արձանագրել է, որ գործով վարչական մարմինն անտեսել էր այն հանգամանքը, որ ծառայողական քննությունը նշանակվում է կարգապահական խախտման բնույթը, դրա կատարման հանգամանքները և հետևանքները պարզելու, կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելու, զինծառայողի մեղքի աստիճանը և կարգապահական տույժի տեսակը որոշելու համար, ուստի ծառայողական քննությունը չպետք է կատարվի թերի կամ կողմնապահությամբ, իսկ եզրակացության մեջ պետք է նշվեն պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, ինչպես նաև հղում կատարվի «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին:
- Գործերից երկուսի դեպքում վարչական մարմինը խախտել էր օրինականության սկզբունքը՝ թույլ տալով լիազորությունների վերազանցում, մասնավորապես վարչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթներով անտեսվել էին մեկ այլ վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերը, և վարչական մարմինը փորձել էր որպես «վերադաս» վերացնել վարչական ակտը, այնինչ վարչական մարմնի ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել միայն նույն վարչական մարմնի, վերադաս վարչական մարմնի և դատարանի կողմից:
- Իսկ գործերից երեքի դեպքում, որոնք վերաբերում էին չվճարված արձակուրդի, շաբաթ օրերին աշխատելու դիմաց հատուցում ստանալուն, վարչական մարմինը հաշվի չէր առել ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-1424 որոշմամբ արտահայտված

դիրքորոշումը՝ վերջնահաշվարկի, չօգտագործված արձակուրդների մասով, որով ՀՀ սահմանադրական դատարանը փաստել էր, որ զինվորական ծառայության ընթացքում ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի դիմաց փոխհատուցում նախատեսող իրավակարգավորման ապահովումը Սահմանադրությամբ, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված՝ պետության պոզիտիվ պարտականությունն է:

- Գործերից մեկը վերաբերել է Հայցվորի զինապարտ հանդիսանալու կամ չհանդիսանալու հարցին: Հայցվորը ՀՀ-ում գտնվել է որպես օտարերկրացի՝ մշտական կացության հիմքով՝ չունենալով ՀՀ քաղաքացիություն: Սակայն Պաշտպանության նախարարությունը ծանուցել է Հայցվորին այն մասին, որ անձը հանդիսանում է զինապարտ և հերթական գորակոչի ընթացքում ենթակա է պարտադիր զինվորական ծառայության գորակոչի: Ավելին, իր նկատմամբ հարուցվել է քրեական գործ զինվորական ծառայությունից խուսափելու համար: Տվյալ գործով հայցը բավարարվել է, իսկ Դատարանը հաստատել է, որ վարչական մարմինը պատշաճ ուսումնասիրության չի ենթարկել Հայցվորի՝ այլ պետության քաղաքացիություն ստանալու պահին գործող օրենսդրությունը, մասնավորապես ՀՀ սահմանադրության 14-րդ հոդվածը և «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, որոնց համաձայն՝ ՀՀ քաղաքացին միաժամանակ չէր կարող լինել այլ պետության քաղաքացի: Վերոնշյալը վկայում է այն մասին, որ Հայցվորի՝ այլ պետության քաղաքացի դառնալուց հետո Հայցվորի ՀՀ քաղաքացիությունը պետք է դադարեցվեր: Հայցվորի՝ այլ քաղաքացիություն ստանալու պահին գործող խմբագրությամբ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով կարգավորված չի եղել քաղաքացիություն չունեցող ծնողի՝ օտարերկրյա քաղաքացիության ձեռքբերման դեպքում ՀՀ քաղաքացի երեխայի քաղաքացիության որոշման կարգը:
- Մերժված գործերը վերաբերել են պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու համար սահմանված տուգանքների իրավաչափությանը, զինվորական կենսաթոշակ նշանակելուն, ծառայությունում պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթը ոչ իրավաչափ ճանաչելուն, որոնց հետ կապված վարչական մարմնի կողմից վարչարարության իրականացման որևէ խնդիր դատարանի կողմից չի հայտնաբերվել:


Որպես ՀՀ պաշտպանության նախարարության վարչարարության հիմնական, առանցքային խնդիրներ, կարող ենք նշել անգործություն դրսևորելը և լիազորությունների վերազանցումը: Մասնավորապես, դատական գործերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ Պաշտպանության նախարարությունը հիմնականում պարզապես չի դիտարկել ծառայողների կողմից ներկայացված դիմումները, կամ իր գործողությունները չեն բխել իրավասու մեկ այլ վարչական մարմնի կողմից կայացված վարչական ակտից:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը վարչարարություն իրականացնելիս հղում է տվել ուժը կորցրած իրավական ակտերին կամ դրանց դրույթներին:

Դատարանի կողմից վարչարարության ավելի քիչ խնդիրներ կհայտնաբերվեին, եթե վարչական մարմինը չանտեսեր ծառայողների կողմից ներկայացված դիմումները կամ դրանք քննարկեր և բավարարեր ոչ թե դատարան հայց ներկայացնելուց հետո, այլ մինչև վեճը դատարան հասնելը: Հատկանշական է, որ ի տարբերություն Կազմակերպության կողմից դիտարկված այլ վարչական մարմինների, ՀՀ պաշտպանության նախարարության դեպքում խնդիրը ոչ թե վարչական վարույթի նյութերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը չապահովելն է, այլ առհասարակ անգործություն դրսևորելը: Ուստի կարծում ենք, որ հնարավոր կլինի խուսափել դատական վեճերից, եթե ՀՀ պաշտպանության նախարարություն ներկայացվող դիմումներին գործող օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան ընթացք տրվի, ինչպես նաև համապատասխան ստորաբաժանման կողմից ուսումնասիրության ենթարկվի դիմումին առնչվող օրենսդրական դաշտը:

Դիտարկված գործերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ ՊՆ) դեմ բերված հայցերով 2019թ. և 2020թ. մինչև հունիսի 30-ը կայացված 10 վճիռներ¹ և 47 վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներից 40-ը: Դիտարկված գործերից 4-ով հայցերն ամբողջությամբ բավարարվել են (40%), 1-ով՝ բավարարվել է մասնակի (10%), իսկ 5-ով՝ մերժվել (50%):



Դիտարկված գործերը վերաբերել են՝

- 3-ը՝ չօգտագործած արձակուրդի, շաբաթ օրերին աշխատելու դիմաց չվարձատրվելուն,
- 2-ը՝ ոչ իրավաչափորեն մրցույթի անցկացմանը,
- 2-ը՝ չգորակոչված գորակոչերի դիմաց վճարի գանձմանը,
- 1-ը՝ զինապարտության վիճարկմանը,
- 1-ը՝ կենսաթոշակի նշանակմանը,
- 1-ը՝ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելուն:

Բավարարված գործերից 4-ը վերաբերել են սեփականության իրավունքի խախտմանը, որը դրսևորվել է Պատասխանողի կողմից անգործությամբ: Ընդ որում, երկու գործերով² Հայցվորները ներկայացրել են նախորդ տարիների արձակուրդների գումարները հատուցելու

¹ Եվս մեկ գործով տեղեկատվությունն ընդհանրապես հասանելի չի եղել, տե՛ս գործ թիվ՝ ՎԴ/0242/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930037; մեկ այլ գործով հասանելի է միայն եզրափակիչ մասը, տե՛ս գործ թիվ՝ ՎԴ/2613/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932642

² Տե՛ս գործ թիվ՝ ՎԴ/4900/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935060; ՎԴ/0161/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929904; ՎԴ/2/0045/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930516

և շաբաթ օրերին աշխատած և չվարձատրված օրերի դիմաց վարձատրություն ստանալու վերաբերյալ պահանջ, գործերից 1-ով³ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու պահանջ: Բավարարված հայցերից մեկը⁴ վերաբերել է զինապարտության հետ կապված վեճի, որի դեպքում վարչական մարմինը թույլ է տվել օրինականության սկզբունքի խախտում, ինչպես նաև լիազորությունների վերազանցում՝ հաշվի չառնելով մեկ այլ վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտի գոյությունը:

Դիտարկված գործերից 4-ով հայցը քննվել է գործողության կատարման հայցատեսակի, 3-ով՝ պարտավորեցման հայցատեսակի, 2-ով՝ վիճարկման, իսկ ևս մեկ գործով՝ և՛ պարտավորեցման, և՛ գործողության կատարման հայցատեսակների շրջանակներում:

Դիտարկված գործերն առնչվել են մարդու իրավունքների հետևյալ խնդիրներին՝ պատշաճ վարչարարության իրականացում, այդ թվում՝ լաված լինելու իրավունք, սեփականության իրավունք, աշխատանքի դիմաց արդարացի հատուցում ստանալու իրավունք:

Դիտարկված բոլոր գործերով Հայցվորները եղել են ֆիզիկական անձինք:

Հայցվորները դիտարկված 10 գործից 7-ով (70%) ունեցել են փաստաբան ներկայացուցիչ, իսկ գործերից 3-ի դեպքում որևէ ներկայացուցիչ չեն ունեցել, որոնք բոլորը մերժվել են Դատարանի կողմից:

Հայցվորն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով գործի քննությանը մասնակցել է դիտարկված գործերից միայն 7-ով (70%), որոնցից 5-ը բավարարվել են ամբողջությամբ կամ մասնակի, իսկ 2-ը՝ մերժվել: Պատասխանողը գործի քննությանը մասնակցել է բոլոր դիտարկված գործերով: Մեկ գործով որպես համապատասխանող Դատարանը ներգրավել է նաև զինվորական կոմիսարիատին:

Հատկանշական է, որ բոլոր դիտարկված գործերով Պատասխանողի կողմից ներկայացվել է առարկություն, այդ թվում՝ մեկ գործով բանավոր⁵:

Դիտարկված գործերից 2-ի դեպքում հայցը վերադարձվել է՝ հետևյալ հիմնավորումներով.

- 1 գործով Հայցվորը ներկայացրել է երկու հայցապահանջ, սակայն կցել է միայն մեկ պահանջի համար պետական տուրքը վճարելու մասին անդորրագիրը,
- 1 գործով հայցադիմումը ստորագրված չի եղել կամ այն ստորագրել է դրա լիազորությունը չունեցող անձը:


³ Տե՛ս գործ թիվ ՎԴ/9202/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939629

⁴ Տե՛ս գործ թիվ ՎԴ/9974/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940474

⁵ Տե՛ս գործ թիվ ՎԴ/9974/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940474

Դիտարկված գործերից 1-ով, ըստ Դատարանի, Հայցվորն օրենքի ուժով ազատված է եղել պետական տուրք վճարելու պարտավորությունից⁶: Գործը վերաբերել է հայցվորին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելուն՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «իդ» ենթակետի հիմքով:

Դիտարկված գործերից 3-ով (30%) Հայցվորը ներկայացրել է հայցի ապահովման միջնորդություններ:



Որպես ապահովման միջոց երկու գործով⁷ նշվել է դատավարության մասնակցին որոշակի գործողություն կատարելն արգելելը, իսկ ևս մեկ գործով⁸ ն՝ դատավարության մասնակցին որոշակի գործողություն կատարելն արգելելը, ն՝ հայցվորի պահանջի ժամանակավոր բավարարումը:

Ընդհանուր առմամբ ներկայացված միջնորդություններից միայն մեկն է բավարարվել⁹: Տվյալ գործով ՀՀ վարչական դատարանը, քննության առնելով միջնորդությունը և նկատի ունենալով, որ հայցի ապահովման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել ՀՀ ՊՆ կողմից իրեն գորակոչելու գործողություններից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջի մասին դատական ակտի կատարումը, գտել է, որ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը՝ ՀՀ ՊՆ-ին մինչև վարչական գործով վեճն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը Հայցվորին գորակոչելուն ուղղված

⁶ Հետաքրքիր է նույն գործով ՀՀ վերաքննիչ դատարանի դիրքոշումը վերաքննիչ բողոք ներկայացնելու ընդունելության վերաբերյալ: Մասնավորապես Վերաքննիչ դատարանը վերադարձրել է հայցվորի ներկայացուցչի՝ վճռի դեմ բողոքը՝ նշելով, որ օրենքով սահմանված «պետական նպաստ» իրավական եզրույթն իր ծավալի մեջ չի ներառում «կենսաթոշակ» իրավական կատեգորիան: Դեռ ավելին, կենսաթոշակն իր բնույթով էականորեն տարբերվում է աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարներից: Որպիսի պարագայում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ բողոքաբերը ազատված չէ պետական տուրքի վճարումից և անհրաժեշտ է ներկայացնել պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ միջնորդություն՝ վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու վերաբերյալ: Տե՛ս գործ թիվ ՎԴ/1541/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931486

⁷ Տե՛ս գործ թիվ ՎԴ/0468/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930293, ՎԴ/0479/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930292

⁸ Տե՛ս գործ թիվ ՎԴ/9974/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940474

⁹ Տե՛ս գործ թիվ ՎԴ/9974/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940474


գործողություններ կատարելուն արգելելու մասին, բխում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի պահանջներից, ուստի ենթակա է բավարարման:

Մյուս 2 գործերը, որոնցով ներկայացված է եղել հայցի ապահովում կիրառելու միջնորդություն, Հայցվորը հանդիսացել է նույն անձը, իսկ գործերը վերաբերել են ՀՀ ՊՆ-ի կողմից թափուր պաշտոնի համար անցկացված մրցույթներն անվավեր ճանաչելուն: Ընդ որում, Դատարանը միջնորդությունը մերժել է այն հիմնավորմամբ, որ դրանք ներկայացված են եղել վիճարկման հայցատեսակի շրջանակներում:

4 գործերով դատավարությանը ներգրավված է եղել նաև երրորդ անձ, որից 2-ի դեպքում Դատարանի որոշումը հասանելի չի եղել դատալեքում¹⁰: Երրորդ անձինք գործերից 1-ի դեպքում ներգրավվել են Դատարանի նախաձեռնությամբ, իսկ մնացած 3 դեպքերում՝ իրենց դիմումի հիման վրա: Ընդ որում, բոլոր գործերով երրորդ անձ է ներգրավված եղել ՀՀ Ֆինանսների նախարարությունը, քանի որ նշված գործերով շոշափվել նաև վերջինիս շահերը՝ որպես պետական ֆինանսների կառավարման մարմնի: Գործերից 2-ի դեպքում երրորդ անձը չի մասնակցել դատավարությանը, իսկ դրանցից 1-ի դեպքում՝ նույնիսկ չի հայտնել որևէ դիրքորոշում հայցի վերաբերյալ: Նշված 4 գործերից 2 գործով հայցը բավարարվել է ամբողջությամբ, 1-ով՝ մասնակի, իսկ 1-ով՝ մերժվել:

Դիտարկված գործերից մեկով Պատասխանողը մասնակի ընդունել է հայցապահանջը¹¹: Նշված գործը վերաբերել է չօգտագործած արձակուրդի դիմաց վճարում չստանալուն:

Դիտարկված գործերի քննության շրջանակներում հիմնականում նշանակվել են 5-ից ավելի նիստեր (40%), ներառյալ՝ վճռի հրապարակումը: Մասնավորապես, 5-ից ավելի նիստ՝ 4 գործով, 5 նիստ՝ 3 գործով, 4 նիստ՝ 2 գործով, 3 նիստ՝ 1 գործով:




Նախնական նիստեր նշանակվել են գործերից 9-ով (90 %-ով): Նախնական նիստերի քանակը եղել է ընդհուպ մինչև 5-ը:

¹⁰ Տե՛ս գործ թիվ ՎԴ/4900/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935060, գործ թիվ ՎԴ/0161/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929904

¹¹ Տե՛ս գործ թիվ ՎԴ/0161/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929904

Դիտարկված ժամանակահատվածում չկայացած նիստի հիմնական պատճառը եղել է դատավորի՝ վերապատրաստման դասերին մասնակցելը:

Դիտարկված գործերի տևողությունը վարույթ ընդունելու պահից մինչև վճռի հրապարակումը տատանվել է, իսկ ամենաերկարը տևել է 1 տարի 3 ամիս¹²: Նշված գործը վերաբերել է չօգտագործված արձակուրդի և շաբաթ օրերին աշխատելու դիմաց հատուցում ստանալուն: Եվս երեք գործ տևել են 1 տարի 2 ամիս, որոնցից մեկը վերաբերել է շաբաթ օրերին աշխատելու համար հատուցում ստանալուն, իսկ 2-ը՝ թափուր հաստիք զբաղեցնելու մրցույթի արդյունքները վիճարկելուն:




Դիտարկված գործերից 9-ով կայացվել է վճիռ, իսկ 1-ով՝ մասով կարճման որոշում, մասով՝ վճիռ¹³: Նշված գործով գործը մի մասով կարճվել է, քանի որ Հայցվորը հրաժարվել է այդ մասով պահանջից:

Գործերի մի մասում վճռում առկա են հղումներ ՀՀ սահմանադրությանը (3 գործով), միջազգային պայմանագրերին /Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ)/ (1 գործով), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպերին (1 գործով), Սահմանադրական դատարանի որոշումներին (4 գործով):

¹² Տե՛ս գործ թիվ ՎԴ/0161/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929904

¹³ Տե՛ս գործ թիվ ՎԴ/0161/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929904



Գործերից մեկի շրջանակներում Դատարանը վկայակոչել է ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը և ՄԻԵԴ նախադեպային որոշումները, որոնցում նշված է, որ «սեփականություն» կարող է համարվել ինչպես «գոյություն ունեցող գույքը», այնպես էլ այն ակտիվները, ներառյալ՝ պահանջները, որոնց վերաբերյալ անձը կարող է հիմնավոր կերպով պնդել, որ ինքն ունի այդ գույքային իրավունքներն արդյունավետ իրացնելու առնվազն «օրինական սպասելիք»¹⁴: Տվյալ գործով Հայցվորը ներկայացրել էր հետուսումնական ծառայության ողջ ժամանակահատվածի ընթացքում հանգստյան օրերին ծառայության ներգրավվելու համար դրամական հատուցում վճարելուն պարտավորեցնելու պահանջ՝ պնդելով, որ ոչ աշխատանքային շաբաթ օրերին փաստացի կատարած աշխատանքի համար պետք է ստանա դրամական հատուցում, որպիսի պահանջը Դատարանի կողմից բավարարվել է:

Մեկ այլ գործով Դատարանը, քննելով գորակոչվելու իրավաչափության վերաբերյալ պահանջ, վկայակոչել է ՀՀ սահմանադրական դատարանի 15.03.2011 թվականի ՍԴՈ-945 որոշումը, որի շրջանակներում դատարանը կատարել էր հետևյալ դիտարկումը. «...դիմողը «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ... 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության սահմանադրականությունը վիճարկելու միջոցով առաջադրում է հետևյալ սահմանադրաիրավական վեճը. արդյո՞ք անձի կամաարտահայտությունը՝ հրաժարվելու ՀՀ քաղաքացիությունից և/կամ ձեռք բերելու այլ երկրի քաղաքացիություն, բավարար նախապայման չէ ՀՀ քաղաքացիության դադարման համար, և կարող է, արդյո՞ք, անձի ազատ կամաարտահայտությամբ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու և/կամ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում ՀՀ քաղաքացիության դադարումը կախվածության մեջ դրվել որոշակի պարտականությունների կատարման փաստից»¹⁵:

Գործերից մեկով¹⁶ Դատարանը, քննելով աշխատավարձի վճարման պահանջ, վկայակոչել է ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-649 որոշումը

¹⁴ Տե՛ս գործ թիվ ՎԴ2/0045/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930516

¹⁵ Տե՛ս գործ թիվ ՎԴ/9974/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940474

¹⁶ Տե՛ս գործ թիվ ՎԴ2/0045/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930516

արտահայտած դիրքորոշումը, ըստ որի՝ աշխատավարձը քաղաքացու սեփականությունն է, իսկ 2008 թվականի մարտի 18-ի ՄԴՈ-741 որոշմամբ նշվել է, որ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Երկու գործերով¹⁷ Դատարանը վկայակոչել է ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի ՄԴՈ-1424 որոշումը, որով «Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասը՝ զինծառայողի՝ չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորությունը զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա ժամանակահատվածով սահմանափակելու մասով, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 29-րդ, 60-րդ, 73-րդ և 82-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Դիտարկված գործերից 2-ով¹⁸, բացի պետական տուրքից, քննարկվել է նաև դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարների հատուցման հարցը, որից երկու դեպքում էլ պահանջը բավարարվել է:

Դիտարկված գործերից 8-ով (80%) վճիռը բողոքարկվել է, որից 4-ը՝ Հայցվորի կամ նրա ներկայացուցչի կողմից, 4-ը՝ Պատասխանողի:

Վարչարարության իրականացման հետ կապված խնդիրներ

Դիտարկված գործերով արձանագրվել են վարչարարության իրականացման հետևյալ խնդիրները.

➤ Օրինականության սկզբունքի խախտում. լիազորությունների վերազանցում

Վարչական գործերից մեկով Հայցվորը ՀՀ-ում գտնվել է որպես օտարերկրացի՝ մշտական կացության հիմքով՝ չունենալով ՀՀ քաղաքացիություն: Սակայն ՊՆ-ն ծանուցել է Հայցվորին այն մասին, որ ինքը հանդիսանում է զինապարտ և 2019 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի¹⁹: Ավելին, իր նկատմամբ հարուցվել է քրեական գործ զինվորական ծառայությունից խուսափելու համար:

¹⁷ Տե՛ս գործ թիվ ՎԴ/0161/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929904, ՎԴ/4900/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935060

¹⁸ Տե՛ս գործ թիվ ՎԴ/9202/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939629; ՎԴ/0161/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929904

¹⁹ Տե՛ս գործ թիվ ՎԴ/9974/05/19, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940474

Վերոնշյալի կապակցությամբ Հայցվորը դիմել էր ՊՆ-ը՝ խնդրելով ձեռնպահ մնալ իրեն մինչև մշտական կացության քարտի գործողության ավարտը զինակոչելու գործողություններից, սակայն ստացել էր մերժում, որով վարչական մարմինն ընդհանրապես չէր անդրադարձել դիմումով հնչեցված իրավական և փաստական հիմքերին:

Ստացվում է, որ վարչական մարմինը պատշաճ ուսումնասիրության չի ենթարկել Հայցվորի՝ ՌԴ քաղաքացիություն ստանալու պահին գործող օրենսդրությունը, մասնավորապես ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը և «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, որոնց համաձայն՝ ՀՀ քաղաքացին միաժամանակ չէր կարող լինել այլ պետության քաղաքացի: Վերոնշյալը վկայում է այն մասին, որ Հայցվորի՝ ՌԴ քաղաքացի դառնալուց հետո Հայցվորի ՀՀ քաղաքացիությունը պետք է դադարեցվեր: Հայցվորի՝ ՌԴ քաղաքացիություն ստանալու պահին, այն է՝ 20.04.2004 թվականին գործող խմբագրությամբ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով կարգավորված չի եղել քաղաքացիություն չունեցող ծնողի՝ օտարերկրյա քաղաքացիության ձեռքբերման դեպքում ՀՀ քաղաքացի երեխայի քաղաքացիության որոշման կարգը: Մասնավորապես, իրավահարաբերության առաջացման պահին գործող խմբագրությամբ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «ՀՀ քաղաքացիությունը կորցնելու դեպքում ՀՀ քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև 14 տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն: Եթե ծնողներից մեկը կորցրել է ՀՀ քաղաքացիությունը, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի է, նրանց մինչև 14 տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է ՀՀ-ից դուրս, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը»: Իրավահարաբերության առաջացման պահին գործող խմբագրությամբ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Անձը ՀՀ քաղաքացիությունը կորցնում է քաղաքացիության դադարեցման հետևանքով»:

Վերոշարադրյալ նորմերի համակարգային վերլուծությամբ Դատարանը եզրահանգել է, որ որոշակի թվականից հետո Հայցվորի ծնողները պետք է դիմում ներկայացնեին իրենց 14 տարին չլրացած զավակի քաղաքացիության դադարեցման պահանջով: Վերոնշյալ դիմումը ծնողների կողմից չի ներկայացվել, արդյունքում, ի հեճուկս իրավահարաբերության առաջացման պահին գործող խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածով և «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված իմպերատիվ պայմանի, համաձայն որի՝ ՀՀ քաղաքացին միաժամանակ չի կարող լինել այլ պետության քաղաքացի, սույն գործով Հայցվորը, հանդիսանալով ՌԴ քաղաքացի, շարունակել է հաշվառվել նաև որպես ՀՀ քաղաքացի: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 27.11.2005 թվականի փոփոխությունների արդյունքում վերացվեց 05.05.1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածում սահմանված՝ ՀՀ քաղաքացու՝ միաժամանակ այլ երկրի քաղաքացի լինելու արգելքը և ՀՀ-ում ճանաչվեց երկքաղաքացիության իրավունքը: Նշված սահմանադրական փոփոխության արդյունքում համապատասխան փոփոխություններ

կատարվեցին նաև «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, նշված օրենքում 24.03.2007 թվականին կատարվեց լրացում ի դեմս 13.1-րդ հոդվածի, որի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ «ՀՀ երկքաղաքացի է համարվում այն անձը, որը ՀՀ քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն: ՀՀ երկքաղաքացին ՀՀ համար ճանաչվում է միայն որպես ՀՀ քաղաքացի: Սույն նորմը տարածվում է նաև 1995 թվականի հունվարի 1-ից հետո, առանց սահմանված կարգի ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու, այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած, ինչպես նաև ՀՀ քաղաքացիությունից միակողմանի հրաժարված ՀՀ քաղաքացիների վրա»:

Վերոնշյալ հիմնավորումներով Դատարանը բավարարել է հայցը՝ արձանագրելով ՀՀ ՊՆ-ի կողմից Հայցվորի իրավունքների խախտման փաստը: Վարչական մարմնի կողմից մեկ այլ վարչական ակտի՝ կացության քարտի իրավաչափությանը վստահելու և դրա հետ կապված օրենսդրությունը պատշաճ ուսումնասիրելու պարագայում, կբացատրվեր վեճի առաջացումը:

- **Ոչ իրավաչափորեն անգործության դրսևորում. սեփականության իրավունքի խախտում.**

ա/ նախորդ տարիների արձակուրդների գումարները հատուցելը.

Երկու գործերով²⁰ հայցվորներն արձակվել էին ՀՀ զինված ուժերի ծառայությունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայության մեջ գտնվելու տարիների ընթացքում հայցվորներն իրենց հասանելիք հերթական արձակուրդներից չեն օգտվել, դիմել են ՀՀ պաշտպանության նախարարին՝ խնդրելով հաշվարկել և տրամադրել նախորդ տարիների համար իրենց հասանելիք արձակուրդի գումարները: Հատկանշական է, որ դիմումներին որևէ պատասխան չի տրվել, որի հետևանքով անձինք գործողության կատարման հայցի շրջանակներում դիմել են դատական պաշտպանության:

Այսպես, Դատարանը բավարարել է հայցադիմումները՝ որպես իրավական փաստարկ նշելով ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՄԴՈ-1424 որոշումը, ըստ որի՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասը՝ զինծառայողի՝ չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորությունը զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա ժամանակահատվածով սահմանափակելու մասով, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 29-րդ, 60-րդ, 73-րդ և 82-րդ հոդվածներին հակասող և անվավեր: Վերոգրյալի լույսի ներքո Դատարանը ելել է այն եզրահանգման, որ ներկայումս գորացրված զինծառայողների չօգտագործված ամենամյա արձակուրդի դիմաց դրամական հատուցման վերաբերյալ հատուկ կարգավորման բացակայության պարագայում գործում են ՀՀ գործող աշխատանքային օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումները: ՀՀ

²⁰ Տե՛ս գործ թիվ ՎԴ/4900/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935060;
ՎԴ/0161/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929904

սահմանադրական դատարանն իր՝ 2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշման մեջ ևս նշել է, որ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ իրավակարգավորման այդպիսի պայմաններում, երբ կոնկրետ ժամանակահատվածում չի եղել չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու ժամկետային սահմանափակումը, սակայն զինծառայողը զրկված է եղել այդ արձակուրդային օրերն օգտագործելու կամ դրանց դիմաց առանց ծառայությունից արձակվելու փոխհատուցում պահանջելու և ստանալու հնարավորությունից, ապա զինծառայողի համար առկա են եղել «օրինական ակնկալիքի» հիմքեր: Հետևաբար, նշված դեպքերում պետք է երաշխավորվի փոխհատուցում ստանալու՝ անձի հնարավորությունը՝ որպես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանության իրագործում:

Հատկանշական է, որ պատասխանող կողմը Դատարան ներկայացրած առարկությամբ և դատաքնության ընթացքում հղում է կատարել այդ պահին այլևս չգործող տարբեր նորմատիվ ակտերում զետեղված իրավական դրույթներին: Պատասխանողը միատեսակ դիրքորոշում է հայտնել ներկայացված առարկությամբ, որով հայտնել է, որ մինչև 21.06.2005թ. գործած ՀՀ աշխատանքային օրենսգրքի 246.1-րդ հոդվածի համաձայն՝ «Դրամական պահանջների հարցով, բացի հարկադրական պարապուրդի ժամանակամիջոցի համար աշխատավարձի տարբերությունը վճարելու պահանջներից, աշխատանքային վեճերը քննելիս, վեճը քննող մարմինն իրավունք ունի վճիռ կայացնել վճարելու աշխատողին հասանելիք գումարները ոչ ավելի, քան մեկ տարվա համար, իսկ արձակման դեպքում՝ չօգտագործված արձակուրդի դիմաց դրամական փոխհատուցման հարցերով, ոչ ավելի, քան երկու աշխատանքային տարվա համար»: Դատարանն ընդգծել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի (ընդունվել է 2004թ., ուժի մեջ է 21.06.2005թ.) 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար», այսինքն՝ տվյալ նորմը կիրառելի է միայն 21.06.2005թ.-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

բ/ շաբաթ օրերին աշխատած և չվարձատրված օրերի դիմաց վարձատրություն ստանալը.

Անգործություն է դրսևորվել նաև մեկ այլ վարչական գործով²¹, որով հայցվորը դիմել էր ՀՀ ՊՆ՝ զինվորական ծառայության ընթացքում շաբաթ օրերին աշխատած և չվարձատրված օրերի

²¹ Տե՛ս գործ թիվ ՎԴ2/0045/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930516

դիմաց վարձատրություն ստանալու համար, սակայն Նախարարության կողմից դիմումին որևէ պատասխան չի տրվել: Դատարանը հայցը բավարարել է այն պատճառաբանությամբ, որ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողներին արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ տալու վերոնշյալ առանձնահատկություններն ինքնին չեն բացառում ընդհանրապես ցանկացած վարձատրություն: Դատարանի գնահատմամբ՝ այն դեպքերում, երբ զինծառայողն իրեն հասանելիք հանգստյան օրը ներգրավվել է ծառայողական պարտականությունների կատարմանը, սակայն «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքով սահմանված որևէ եղանակով փոխհատուցում չի ստացել, ապա դա չի նշանակում, որ անձը զրկվում է դրա դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքից: Դատարանի գնահատմամբ՝ այդ դեպքում պահպանվում է հանգստյան օրն աշխատանքի ներգրավելու դիմաց «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված վարձատրություն (դրամական ապահովություն) ստանալու անձի իրավունքը:

Ստացվում է, որ ոչ աշխատանքային շաբաթ օրերին ծառայության ներգրավելու փոխարեն Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով սահմանված որևէ եղանակով փոխհատուցում չստանալու և զինվորական ծառայությունից արձակվելու պատճառով այդ եղանակներով փոխհատուցում ստանալու փաստացի անհնարինության պայմաններում Հայցվորն ուներ իր ժամային (օրական) աշխատավարձի չափով դրամական հատուցում ստանալու «օրինական սպասելիք»: Տվյալ դեպքում ևս վարչական մարմինը ոչ իրավաչափորեն անգործություն է ցուցաբերել:

զ/ բնակարանային հատուցում տրամադրելը.

Գործերից մեկով²² Հայցվորի ամուսինը 11.03.1994 թվականին Աղղամի շրջանում մղված մարտական գործողությունների ժամանակ վիրավորվել է և ստացել է 1-ին կարգի հաշմանդամություն: Երևանի քաղաքապետի որոշմամբ հայցվորի ընտանիքը վեց անձով վերցվել է հաշվառման՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու համար: ՊՆ համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողովի կողմից որոշում է ընդունվել հայցվորի ընտանիքի բնակարանային գործը հաշվառման և բնակարանային պայմանների հստակեցման նպատակով վերադարձնել Երևանի քաղաքապետարան:

Ստացվում է, որ վարչական մարմինը ոչ իրավաչափորեն մեկ այլ վարչական մարմնի որոշումը կասկածի տակ է դրել՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ Երևանի

²² Տե՛ս գործ թիվ ՎԴ/9202/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939629

քաղաքապետի որոշումը չի ճանաչվել անվավեր և դրա գործողությունը չի դադարեցվել, ուստի չի կարող կասկածի տակ դրվել դրա իրավաչափությունը:

Դատարանն արձանագրել է, որ Կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 947-Ն որոշմամբ հաստատված Ջոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) օրենքով սահմանված կարիքավոր ընտանիքներին բնակարանային հաշվառման վերցնելու և բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգով /այսուհետ՝ Կարգ/ ՊՆ համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողովը չունի լիազորություն՝ գնահատելու բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների ցուցակները հաստատելու մասին Երևանի քաղաքապետի որոշման իրավաչափությունը: Ավելին, նման լիազորություն չէր կարող Կարգով սահմանվել, քանի որ Պաշտպանության նախարարը Երևանի քաղաքապետի վերադասը չէ, իսկ վարչական մարմնի ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել միայն նույն վարչական մարմնի, վերադաս վարչական մարմնի և դատարանի կողմից: Իսկ սահմանված ժամկետում վարչական բողոք և/կամ դատական հայց ներկայացված չլինելու դեպքում որևէ մեկը չի կարող կասկածի տակ դնել վարչական ակտի իրավաչափությունը: Դա բխում է իրավական անվտանգության հիմնարար սկզբունքից, որի բաղադրատարրերից է իրավական ակտերի կայունությունը: Մինչդեռ ՊՆ համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողովի որոշմամբ կասկածի տակ է դրվել Երևանի քաղաքապետի որոշման իրավաչափությունը: Արդյունքում հանձնաժողովը, վերազանցելով իր լիազորությունները, վերադարձրել է Հայցվորի ընտանիքի բնակարանային գործը Երևանի քաղաքապետարան:

Դիտարկված գործերից 2-ով վարչարարության խնդիրներ Դատարանի կողմից չեն հայտնաբերվել: Մերժված գործերից երկուսը²³ ներկայացված են եղել նույն անձի կողմից, մինևնույն փաստական հիմքերով և վերաբերել են ՀՀ ՊՆ կողմից հայտարարված թափուր հաստիքների համար անցկացված մրցույթների իրավաչափությանը: Դատարանը գտել է, որ հայցվորի կողմից չեն ներկայացվել հիմնավորումներ, որոնք ողջամիտ կասկած կառաջացնեին առ այն, որ մրցույթի հարցերը ոչ պատահական, կանխամտածված եղանակով են ընտրվել: Բացառապես այն, որ Հայցվորն առարկում է իրավաչափ գործողության դեմ, դեռևս չի ենթադրում այդպիսի պնդման վերաբերյալ հակառակի ապացուցում, այլ ամեն դեպքում անհրաժեշտ է պատճառաբանել ոչ իրավաչափ գործողության վերաբերյալ

²³ Տե՛ս գործ թիվ ՎԴ/0468/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930293; ՎԴ/0479/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930292

փաստարկներն ու պատճառահետևանքային կապը: Դատարանն արձանագրել է, որ հարցերը և դրանց ճիշտ պատասխանները իրապես հրապարակման ենթակա չեն, սակայն դրանց հրապարակման վերաբերյալ Հայցվորն է ներկայացրել պնդումներ՝ չհիմնավորելով և չապացուցելով նշվածը: Հայցվորը սահմանափակվել է բացառապես այն պնդումով, որ դրանք հրապարակվել են, սակայն չի հիմնավորել այդպիսի փաստը:

Դատարանի գնահատմամբ՝ վարչական մարմինն օբյեկտիվ իրականությունում հնարավորություն չունի ապացուցելու պասիվ վարքագծի (չհրապարակելու) առկայությունը, որպիսի պայմաններում չհրապարակված լինելու կանխավարկածի տիրույթում հրապարակված լինելու փաստը պետք է ապացուցի այն վկայակոչող կողմը:

Կարճման որոշումներ

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել նաև ՀՀ ՊՆ-ի դեմ ներկայացված 47 վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներից 40-ը: Հիշյալ գործերով որոշումները դատարանի կողմից հրապարակվել են 2019 թվականի ապրիլ ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը:

Նշված գործերից բոլորով հայցվորները ֆիզիկական անձինք են եղել:

Գործերից 2-ով (5%) Հայցվորն ունեցել է փաստաբան ներկայացուցիչ, 33-ով (82,5%) ներկայացուցչի անունն առկա է եղել ՀՀ փաստաբանների պալատի կայքում, սակայն դատալեքսում անձի փաստաբան լինելու վերաբերյալ նշում չի կատարվել, 2 գործով (5%) հայցվորն ունեցել է այլ տեսակի ներկայացուցիչ, 3 գործով (7,5%)՝ ներկայացուցիչ չի ունեցել:

Դիտարկված գործերը վերաբերել են հիմնականում աշխատանքային վեճերին, ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցմանը, իսկ մնացած գործերը՝ բժշկական եզրակացության անվավերության, ՀՀ զինված ուժերից արձակման մասին հրամանը ստանալու, երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու, շաբաթ օրերին աշխատած, սակայն չվարձատրված գումարը վարձատրելու, հայցվորին բնակարան ձեռք բերելու համար բնակարանի գնին համարժեք անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու, Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունը անվավեր ճանաչելու և կրկնակի բժշկական հետազոտություն իրականացնելուն պարտավորեցնելու, քաղաքացուն շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչելու խնդիրներին:


Դիտարկված գործերից 19-ը վերաբերել են տարատեսակ տեղեկատվություն, փաստաթղթեր ստանալու պահանջներին: Դրանցից 17-ի դեպքում Հայցվորը հրաժարվել է հայցից, իսկ 2-ով՝ վեճն ըստ էության լուծվել է:

Գործերի գերակշիռ մասով 33 գործով (82,5%) հայցվորը հրաժարվել է հայցից, 5-ի դեպքում (57%) կարճման հիմք է հանդիսացել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ վեճի ըստ էության սպառված լինելը, 1-ի դեպքում բացահայտվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածով

նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, իսկ 1 գործով կարճման որոշումը տեղադրված չի եղել:

Վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով կարճված գործերով հայցերը ներկայացված են եղել հետևյալ խնդիրներով. 2-ը՝ ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի հաշվարկը ստանալու խնդրի հիմքով, 1-ը՝ բժշկական եզրակացությունը անվավեր ճանաչելու, 1-ը՝ առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն տրամադրելու, 1-ը՝ զինվորական ծառայության հետ կապված խնդիրների հիմքով:

Գործերից 8-ով տեղի է ունեցել մեկ նիստ, 12-ով՝ երկու նիստ, 10-ով՝ երեք նիստ, 6-ով՝ 4 նիստ, 2-ով՝ հինգ նիստ, իսկ մնացածով՝ հինգից ավել նիստ:



Դիտարկված 40 գործերի շրջանակներում 15 նիստ չի կայացել՝ գործերից 10-ով՝ մինչև նշանակված դատական նիստի կայացումը գործի վարույթը կարճվելու, 1-ով՝ նախորդ դատական նիստի ուշ ավարտվելու, 3-ով՝ արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումների, 1-ով՝ դատավորի վատառողջ լինելու հանգամանքներով պայմանավորված:

Դիտարկված գործերի վարույթներից ամենաերկարը տևել է 1 տարի 6 ամիս²⁴: Նշված գործով Դատարանին ներկայացված դիմումով Հայցվոր կողմը հրաժարվել է հայցից և խնդրել է կարճել գործի վարույթը: Մնացած գործերի տևողության ժամանակահատվածը եղել է շատ տարբեր՝ մեկ ամսից մինչև 9 ամիս:

Հատկանշական է, որ ներկայացուցչի հատուցման ենթակա ծախսեր Դատարանի կողմից չեն բավարարվել: Դիտարկված գործերը կարճվել են վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով, Պատասխանողի կողմից Հայցվորների պահանջը արտադատական կարգով փաստացի բավարարվելուց հետո:

Ինչպես տեսնում ենք, գործերի մեծ մասը՝ 33-ը կարճվել են հայցվորի՝ հայցից հրաժարված լինելու հիմքով: Հիմնականում հայցվորը ներկայացրած է եղել հայցից հրաժարվելու վերաբերյալ միջնորդություն, այնուհետև միջնորդությունը քննարկելու նպատակով հրավիրված դատական նիստին չի ներկայացել, որով պայմանավորված՝ հայցից հրաժարվելու պատճառները գործերի մեծ մասով հայտնի չեն: Բացի այդ, 5 գործով հայցվորը նշել էր, որ

²⁴ ՎՂ2/0080/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932175

պատասխանողի կողմից հայցվող գործողությունը կատարված է, որն էլ հիմք է հանդիսացել հայցից հրաժարման համար:

Ստացվում է, որ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու դիմում ներկայացրած չլինելու պարագայում ևս գործի վարույթը կկարճվեր՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով: Տվյալ հիմքով կարճված գործերից 5-ով ևս Դատարանն արձանագրել է, որ պատասխանողի կողմից տրամադրված վարչական վարույթի նյութերում առկա է հայցվող գործողությունը կատարած լինելու կամ ակնկալվող վարչական ակտն ընդունված լինելու մասին ապացույցները:

Վարչարարության և դատական պրակտիկայի խնդիրներ կարճված գործերով հիմնականում «տեսանելի» չեն եղել, քանի որ կարճված գործերի մասով տեղեկատվությունը որոշման մեջ սահմանափակ է ներկայացված եղել: Մասնավորապես ներկայացված չեն եղել հայցի փաստական և իրավական հիմքերը, պատասխանողի դիրքորոշումները:

Եզրակացություն և առաջարկություններ

Ուսումնասիրությամբ արձանագրվել են ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող վարչարարության հետյալ հիմնական խնդիրները.

- Անգործություն դրսևորելը. ՀՀ պաշտպանության նախարարությունը պարզապես առանց քննության է թողնում ծառայողների կողմից ներկայացված դիմումները: Ավելին, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախարարության կողմից հայցվող գործողությունները կատարվում են արդեն հայցը ՀՀ վարչական դատարան ներկայացնելուց հետո:

- Վարչարարության բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության խնդիրներ. օրինակ, վարչական մարմնի կողմից ծառայողական քննությունը կատարվել է թերի և կողմնապահությամբ, անտեսվել է այն հանգամանքը, որ ծառայողական քննությունը նշանակվում է կարգապահական խախտման բնույթը, դրա կատարման հանգամանքները և հետևանքները պարզելու, կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելու, զինծառայողի մեղքի աստիճանը և կարգապահական տույժի տեսակը որոշելու համար, իսկ եզրակացության մեջ չի նշվել պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, ինչպես նաև հղում չի կատարվել «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին:

- Վարչարարության շրջանակներում օրինականության սկզբունքի պահպանման լիազորությունների վերազանցման խնդիրներ. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լիազորությունների վերազանցումը դրսևորվել է այլ վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերը հաշվի չառնելով, ինչպես նաև այլ վարչական մարմնի վարչական ակտը վերացնելով:

- Օրենսդրական փոփոխությունների և դատական ակտերի ուսումնասիրության և դրանց հետևելու հետ կապված խնդիրներ. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրեն հասցեագրված դիմումների իրավական հիմքերը, վերաբերելի օրենսդրությունը պատշաճ ուսումնասիրության չի ենթարկվել: Օրինակ, չվճարված արձակուրդի, շաբաթ օրերին աշխատելու դիմաց հատուցում ստանալու գործերով, ՊՆ-ի կողմից հաշվի չի առնվել ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-1424 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը՝ վերջնահաշվարկի, չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:

Առաջարկություններ

ՀՀ Պաշտպանության նախարարությանը՝

- Ապահովել վարչարարություն իրականացնող աշխատակիցների կողմից դիմումների պատշաճ ուսումնասիրությունը, երաշխավորել ներկայացվող դիմումների հիմքով վարչական վարույթի իրականացումը և օրենքով նախատեսված ժամկետում լուծում տալը՝ չդրսևորելով անգործություն,

- Ապահովել վարչարարություն իրականացնող աշխատակիցների կողմից պատշաճ, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ վարչարարության իրականացումը,
- Ապահովել վարչարարություն իրականացնող աշխատակիցների իրազեկվածությունը ոլորտին վերաբերելի իրավական ակտերին և դրանց փոփոխություններին:
- Ամփոփել դատական պրակտիկան, վերհանել դատարանի կողմից արձանագրված վարչարարության խնդիրները, ապահովել վարչարարություն իրականացնող անձանց իրազեկվածությունը դրանց մասին՝ թույլ չտալու վարչարարության այնպիսի խնդիրներ, որոնց վերաբերյալ առկա է հաստատված դատական պրակտիկա: